

ՀՐԱՆՏ ԹԱՄՐԱԳՅԱՆ



Քիչ անհատներ կան, որոնք տա-
ղանդի ու անձնական հմայքի անսովոր
ձգողական ուժով իրենց շուրջն ստեղ-
ծում են հոգևոր մթնոլորտ, ոգի ու շունչ
հաղորդում ժամանակին ու միջավայրին:
Ակադեմիկոս Հրանտ Թամրագյանն այդ
բացառիկ անհատներից էր, և նրա ան-
դառնալի կորուստը աղքատացրեց մեր
ընդհանուր հոգևոր կյանքը:

Կես դար շարունակ մի քանի սե-
րունդ Թամրագյանի դասագրքերով է ա-
ռընչվել հայ գրականության արժեքնե-
րին, և այսուհետ ևս այդ բազմահազար
մարդիկ շարունակելու են մտովի հաղոր-
դակցվել գրականագետի թողած հա-
րուստ ժառանգությանը: Իսկ Թամրա-
գյանի մերձավոր շրջապատի մարդ-
կանց՝ գործընկերների, ասպիրանտների
ու ուսանողների ականջներում դեռ եր-
կար է հնչելու նրա ձայնը, բանասիրա-
կան ֆակուլտետի լսարաններում, մի-
ջանցքներում ու աշխատասենյակներում
դեռ երկար է պահպանվելու նրա եռան-

դուն քայլվածքի, փոթորկոտ բարկու-
թյան և բարձրաձայն ծիծաղի պատրան-
քը...

Հր. Թամրագյանը մարդու և գրա-
կանագետի ավարտուն ու ամբողջական
կերպար էր: Նրա՝ իբրև անհատի կայաց-
ման վրա ազդել էին մի քանի գործոն-
ներ: Հայրենի Աշաշուր գյուղի լեռնային
բնությունը նրան պարզևեց գեղեցիկի ա-
նանց զգացում, բնաշխարհի մարդիկ օգ-
նեցին խորունկ կերպով ընկալելու հա-
սարակ մարդու հոգեբանությունը: Հա-
մալսարանը, նրա բնատուր ընդունակու-
թյունները զարգացնելու հետ, գիտելիք-
ներ ձեռք բերելու ճանապարհ ցույց
տվեց: Թամրագյանի ստեղծագործական
ուժերի ծաղկման տարիները համընկան
խրոշշովյան ձնհալի ժամանակաշրջա-
նին, երբ կապանքներից ազատագրված
հասարակական միտքը նպաստեց ազ-
գային գիտակցության զարթոնքին և գե-
ղագիտական նոր սկզբունքների արմա-
տավորմանը: Վերջապես, Թամրագյանի
աշխարհայացքը ու գեղագիտական ճա-
խասիրությունները որոշակիացան 40-ա-
կան թթ. գրական ասպարեզ իջած բա-
նաստեղծների ու գրողների միջավայ-
րում, որոնց կրտսեր գրչակիցն էր և ո-
րոնց զուգահեռ վերելք ապրեց նաև ին-
քը:

1940-ական թթ. մի քանի քննադա-
տական հողված տպագրած Թամրագյա-
նը արդեն 50-ականներին տիրապես
մտավ գրական կյանք, իր կրքոտ ու
սկզբունքային հողվածներով նվաճեց
հեղինակություն և ժամանակակիցների
ուշադրությունը: Երիտասարդ քննադա-
տի բազմաբնույթ հողվածների մեջ նկա-
տելի էր նրա առանձնակի սերը պոե-
զիայի նկատմամբ: Հր. Թամրագյանի ե-
ռանդուն վարքագիծը դրսևորվում է

հատկապես գրական բանավեճերում, որ 1950-1960-ական թթ. ծավալվում էին գրականության կենսական խնդիրների, մասնավորապես պոեզիայի շուրջ: Պատահական չէ, որ հենց նա ամփոփեց Վ. Դավթյանի «Ժամանակակից պոեզիան և ռեալիզմի նախահիմքերը» հոդվածով ծայր առած և Պ. Սևակի «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի» հոդվածով բորբոքված բանավեճը: Հետագա ամբողջ կյանքում Հր. Թամրազյանը հավատարիմ մնաց պոեզիայի նկատմամբ իր մեծ սիրուն, որի շքեղ ապացույցը նրա բազմաթիվ մենագրություններն են («Սիամանթո», 1964, «Պոեզիան պատմության քառուղիներում», 1971, «Երիտասարդ Չարենցը», 1974, «Բանաստեղծը և ճակատագիրը», 1978, «Եղիշե Չարենց», 1981, «Վահան Տերյան», 1985, «Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը», 1995, «Հայ քնարերգուներ», Ա և Բ հատորները (հ. Ա, 1996, հ. Բ, 1999):

Սակայն օրվա գրականության հոգսերով ապրող ու նրա հեռանկարով մտահոգ քննադատի հետաքրքրությունները բնավ էլ չէին սահմանափակվում գրականության որևէ տեսակով կամ մի մասնավոր ժամանակահատվածով: Քայլ առ քայլ Թամրազյանը մեծացրեց տեսադաշտը՝ իր հետաքրքրությունների ոլորտում աստիճանաբար ներառելով ամբողջ հայ գրականությունը: Արդեն ճանաչում ձեռք բերած գրականագետը 1955 թ. «Շիրվանզադեի դրամատուրգիան» ատենախոսության համար արժանացավ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի, իսկ «Շիրվանզադե. կյանքը և գործը» (1961) աշխատության պաշտպանությամբ ստացավ գիտության դոկտորի աստիճան: Թամրազյանը թաղմ հայացքով գնահատեց գրողի վաստակը՝ ազատելով այն նախորդ ուսումնասիրողների գծած կաղապարներից ու միակողմանիությունից, նրա ստեղծագործությունը քննեց գրողի ապրած ժամանակի հասարակական ու սոցիալական հարաբերությունների համապատկերում, բացահայտեց Շիրվանզադեի ռեալիզմի ակունքները:

Անհանգիստ ու որոնող մտքի տեր գրականագետը ամեն անգամ մի նոր արահետ էր բացում գրական մտածողության մեջ, յուրովի վերագնահատում գրողների ու նրանց ժառանգությունը:

1960-ական թթ. սկզբին վերելք ապրեց ազգային գաղափարախոսությունը, գիտության ու գեղարվեստական մտածողության նյութ դարձավ հայ ժողովրդի հատկապես մոտիկ անցյալը: Թամրազյանի «Խմբապետ Շավարշը» պատմական դարաշրջանի լույսի տակ» հոդվածը (1962) ազգային նորօրյա զարթոնքի արդյունքն էր, որն իր հերթին դարձավ ազգային մտածողության հետագա զարգացման ազդակներից մեկը: Այդ հոդվածը ոչ միայն հեղինակի, այլև նորագույն հայ քրեագիտության ընտիր էջերից է: Այդ ուսումնասիրությունը հաստատեց Թամրազյանի տաղանդի մի առանձնահատկություն ևս: Դա ազգային պատմության ու ճակատագրի գեղարվեստական արծարծումների նկատմամբ նրա խիստ զգայուն վերաբերմունքն էր: Այս իմաստով օրինակալի է թվում Սիամանթոյին նվիրված նրա գրքի ծնունդը 1964 թ.: Այստեղ ևս գրականագետը նորարար էր: Բանաստեղծին ազատելով տարբեր քննադատների տված անհեթեթ պիտակներից՝ Թամրազյանը ցույց տվեց Սիամանթոյի գործի մեծությունն ու արվեստի բարդությունը, որը պայմանավորված էր ազգային տառապանքի ու ճակատագրի՝ բանաստեղծի կենտրոնացած, սևեռուն վերապրումով: Եղիշե Չարենցին նվիրված գրքերում և բազմաթիվ հոդվածներում ևս Թամրազյանի խոսքը առավել շիկացած ու սուր է, երբ նա կանգ է առնում ազգային ճակատագրի չարենցյան ընկալումների վրա:

Տարիների ու տասնամյակների հետ, կարծես բնությանը ու հիվանդությանը հակառակ, Թամրազյանի գրիչն ավելի բեղուն է դառնում, հետաքրքրությունների ոլորտն՝ ավելի ընդարձակ: Անհանգիստ խառնվածքը, որոնող միտքը նրան անվերջ տանում են դեպի նոր հիացումներ, որոնք բազմազան են ոչ միայն նյութի առումով, այլև տարբեր են

կատարման ձևի, ժանրի, ծավալի տեսակետից: Դասագիրք, մենագրություն, գրական դիմանկար, առաջաբան, գրական փոքրիկ էտյուդ, բանավիճային հոդված, գրախոսություն, - ահա ոչ լրիվ տեսականին նրա գրական ժառանգության, հայ հին, նոր և նորագույն շրջանի գրականություն, քրճնադատության պատմություն, վերջին տարիներին՝ նաև Միլյուքի գրականություն, - ահա նրա հետաքրքրությունների ոլորտը: Այս բնագավառներից յուրաքանչյուրում Թամրազյանի ստեղծած վաստակը լիովին կրավականացներ ցանկացած գրականագետի կամ քննադատի՝ ունենալու համար արդար վաստակի և գրականության նկատմամբ իր պարտքը կատարած մարդու գոհունակություն: Խոսել այդ բնագավառներից յուրաքանչյուրում գրականագետի բերած նորությունների կամ կատարած աշխատանքի արդյունքի մասին՝ նշանակում է Թամրազյանի տեսանկյունով վերանայել հայ գրականության բազմադարյան ընթացքը՝ իր բազմաթիվ ճյուղավորումներով ու դրսևորումներով: Թերևս կարելի է հպանցիկ թվարկել մեկ-երկու բնագավառ:

Երևի թե պոեզիայից հետո, որ Թամրազյանի գլխավոր սերն էր (արևմտահայ ու արևելահայ՝ հավասարապես), նրա վաստակը մեծ եղավ հայ գրական քննադատության ուսումնասիրության բնագավառում: Հավանաբար Թամրազյանի հեղինակությունն էր անհրաժեշտ՝ ապացուցելու, որ հայ գրական քննադատական միտքը ուղեկցել է հայ գրականությանը նրա ծննդյան օրից՝ 5-րդ դարից մինչև մեր օրերը, և որ հայ քննադատությունն ունեցել է դարից դար փոխանցվող ուսանելի ավանդներ, որոնք ապահովել են հայ գեղագիտական մտքի անկանգ ընթացքը: Նա իր եռահատոր «Հայ քննադատություն» մեծարժեք աշխատության մեջ, որ ընդգրկում է 5-րդ դարից մինչև 20-րդ դարասկիզբը, բացահայտեց մի շատ կարևոր օրինաչափություն. հիշյալ դարերի ընթացքում հայ գրաքննադատությունը զարգանում

էր համաշխարհային գեղագիտական մտքին զուգահեռ, բայց սեփական ճանապարհով: Այստեղ ևս գիտնականը նոր ուղիներ էր բացում գրականագիտության զարգացման համար:

Մինչև իր արգասավոր կյանքի վերջին պահերն էլ Թամրազյանի միտքն աշխատում էր միանգամից մի քանի ուղղությամբ: Նա նոր էր հրատարակել «Հայ քնարերգուների» 2-րդ հատորը, ամբողջովին, իրեն հատուկ եռանդով մխրճվել էր Նահապետ Քուչակի գոյության բանավիճային հարցի մեջ և զուգահեռ աշխատում էր հուշերի գրքի վրա: Վերջին վերջակետի հետ մահը ևս իր վերջակետը դրեց նրա կյանքին, երբ ընդամենը մի քանի ամիս էր մնացել մինչև 75-ամյակը:

Հր. Թամրազյանին խորթ չէին մարդկային թերություններն ու թուլությունները, բայց մահն այսօր սրբագրել է դրանք և ավելի պայծառ լույս սփռել նրա արժանիքների ու առաքինությունների վրա, որոնք քիչ չէին:

Ամենից առաջ Թամրազյանը երբեք չդավանանեց գրականության նկատմամբ ունեցած իր սիրուն այն առումով, որ միշտ հավատարիմ մնաց բարձր գրականության չափանիշներին և չստորագրեց գրականագետի մասնագիտական խիղճն արատավորող հողված կամ ուսումնասիրություն: Եվ ապա՝ երբեք չհանգստացավ նվաճած դասինների վրա և անվերջ աշխատեց՝ աշխատանքը դարձնելով կենսակերպ:

Հր. Թամրազյանը ուսուցիչ եղավ բառի ամենալայն և ոչ սովորական իմաստով: Ոչ սովորական, որովհետև ուսուցչի նրա դերը չավարտվեց լսարանում: Ամենուր՝ լսարանում, գրուցելիս և անգամ խրճուղիի սեղանի մոտ նա խոսում էր գրականությունից, հետաքրքրություն և առաջացում, պահանջում, հորդորում, մղում աշխատանքի: Այստեղ էր իսկական ուսուցիչը: Այսօր նրա սաներից շատ-շատերն իրենց կոչումների ու ձեռքբերումների համար պարտական են իրենց ուսուցչին:

Կյանքի փո՞րձը, պատմության
տրամաբանության ճիշտ ըմբռնո՞ւմը,
անհատական խառնվա՞ծքը, անսահման
կենսասիրություն՞ը, թե մի այլ բան թույլ
չէին տալիս Քամրազյանին՝ հուսահատ-
վելու: Երկրաշարժի, Ղարաբաղի ազա-
տագրական պատերազմի և նրան հա-
ջորդած քաղաքական վայրիվերումների
ամբողջ ընթացքում նա հավատում էր ա-
պագային և իր ներկայությամբ չէր հան-
դուրժում ո՛չ նվճվոց, ո՛չ էլ չհիմնավոր-
ված վարկաբեկիչ ելույթներ այս կամ
այն գործչի վերաբերյալ:

Այո՛, Քամրազյանը հեռացավ մե-
զանից դեպի մեծ Անհայտը: Մնաց հի-
շատակը: Նրանք, ովքեր կյանքի ճանա-
պարհ են անցել Քամրազյանի հետ, հա-
մոզված են՝ կպահեն նրա հիշատակը
մինչև սեփական երկրային ճանապարհի
վերջը: Մնացածների համար այդ հիշա-
տակը նրա թողած ստվարածավալ ժա-
ռանգության մեջ է, ուր անհանգիստ
տրոփում է գրականության սիրով վառ-
վող մի սիրտ:

Ճ. Ա. ԶԱԼԱՆԹԱՐՅԱՆ